



Հանձնաժողովի՝ շրջիկ (տեղափոխվող) քվեատուփը տանող անդամի գործառույթները

ՈՒՇԱԿՐՈՒԹՅՈՒՆ

Շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի միջոցով քվեարկության ընթացակարգը սկսվում է քվեարկության օրվա ժամը 9-ից և ավարտվում է ժամը 19-ին:

- ▶ Զվեարկության օրվա ժամը 9-ից հանձնաժողովի նախագահը Ձեզ կփոխանցի.
 - ✓ շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակը,
 - ✓ ընտրողների գրանցումն իրականացնողի ստորագրությամբ և գրանցումն իրականացնողի կնիքով վավերացված անհրաժեշտ քանակությամբ ընտրական քվեաթերթիկներ,
 - ✓ հատուկ ծրարներ,
 - ✓ գմռասկնքված շրջիկ (տեղափոխվող) քվեատուփը, որում զետեղված է ստուգողական թերթը:
 - ✓ շրջիկ (տեղափոխվող) ընտրական քվեատուփի գմռասկնքման կնիքը (տեղափոխվող ընտրական քվեատուփը գմռասկնքվում է շրջիկ (տեղափոխվող) ընտրական քվեատուփով ընտրությունն ավարտվելուց հետո):
- ▶ Ընտրողին մոտենալիս խնդրե՛ք նրան ներկայացնել. Վրաստանի քաղաքացու ինքնությունը հավաստող վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը:
- ▶ Համեմատե՛ք ընտրողի անձնական համարը շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակում ընդգրկված անձնական համարի հետ:
- ▶ Ստուգե՛ք ներկայացված փաստաթղթում նշված ընտրողի գրանցման տվյալների և շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակում առկա տվյալների համապատասխանությունը:
- ▶ Շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակում ստորագրությամբ վավերացրե՛ք ընտրական քվեաթերթիկ/քվեաթերթիկներ տրամադրելը:

- ▶ Խնդրե՛ք ընտրողին շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակում իր ազգանվան երկայնքով ստորագրությամբ հավաստել ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները ստանալը:
- ▶ Ընտրողին փոխանցե՛ք, ընտրողների գրանցումն իրականացնողի ստորագրությամբ և գրանցումն իրականացնողի կնիքով վավերացված, ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները:
- ▶ Ընտրողի կողմից քվեաթերթիկը լրացնելուց հետո, նրան փոխանցե՛ք հատուկ ծրարը և ցուցում տվե՛ք, որ նրա մեջ զետեղի ծալված ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները:
- ▶ Ընտրողին խնդրե՛ք ծրարը գցել շրջիկ (տեղափոխվող) ընտրական քվեատուփի մեջ:
- ▶ Քվեարկության ավարտից հետո շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ճեղքն այնպես զմռսակնքե՛ք, որ անհնար լինի, առանց զմռսակնիքը վնասելու, այն բացել:
- ▶ Ոչ ուշ, քան քվեարկության օրվա ժամը 20-ը շրջիկ (տեղափոխվող) ընտրական քվեատուփը վերադարձրե՛ք ընտրական տեղամաս:
- ▶ Քվեարկության շենք վերադառնալուց հետո, հանձնաժողովի քարտուղարին փոխանցե՛ք չօգտագործված ընտրական քվեաթերթիկները և հատուկ ծրարները: Սպասե՛ք հանձնաժողովի նախագահի հետագա ցուցումներին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- ▶ Եթե խախտվել է շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի զմռսակնիքի ամբողջականությունը, այդ մասին անհապաղ տեղեկացրե՛ք հանձնաժողովի նախագահին: Կազմե՛ք համապատասխան բացատրագիր, պատճառի մատնանշմամբ և ստորագրել տվե՛ք Ձեզ ուղեկցող անձանց:
- ▶ Շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի միջոցով քվեարկությանը մասնակցող ընտրողների հանդեպ չի կիրառվում նշմարում:
- ▶ «Ֆիզիկական վիճակի» պատճառով ընտրողի կողմից շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի միջոցով քվեարկության դեպքում, շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակի «Ընտրողի ստորագրություն» սյունակում արե՛ք գրառում՝ «Ֆիզիկական վիճակ» և հավաստե՛ք ստորագրությամբ:
- ▶ «Ֆիզիկական վիճակ» ունեցող ընտրողի (նաև այն ընտրողի, որն ինքնուրույն չի կարող լրացնել ընտրական քվեաթերթիկը) փոխարեն, նրա ներկայությամբ, ընտրական քվեաթերթիկը լրացնում, հատուկ ծրարի մեջ է զետեղում և ծրարը շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի մեջ գցում նրա կողմից ընտրված անձը (բացառությամբ ընտրական հանձնաժողովի անդամի, թեկնածուի, ընտրական սուբյեկտի ներկայացուցչի, մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցի ներկայացուցչի և դիտորդի):